ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԵՎ ԿԱՄԱՐԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/40-2»

ք. Աբովյան «20» սեպտեմբերի 2022թ.

Աբովյանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Բաբայանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կամարիս բնակավայրի ջրագծերի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տաս աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 9 599 496 (ինը միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար չորս հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ՝ որից 1 599 916 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր տասնվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

...ված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների ...ազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Աբովյանի համայնքապետարան	<<ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1	ք. Եղվարդ, Երևանյան փ. 7/5
ՀՎՀՀ՝ 03561498	ՀՎՀՀ 03554349
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ	«Էվոկա Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900102462281	Հ/h 16600053799200
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.S	Կ.S

Հավելված թիվ 1
« 20 » սեպտեմբերի 2022թ. կնքված
«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/40-2» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՄԱՐԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Ընդհանուր արժեք / հազար դրամ /	Ընդհանուր արժեք (տոկոս)
1	2	3	4	5	6	7
	Օբյեկտի անվանումը. Ջրագիծ 1					
	1.1 Ջրագիծ 1-ի հողային աշխատանքներ					
1	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով III կարգի գրունտներում, կողալիցքով	մ^3	314,60	0,578	181,89	2,27
2	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով IV կարգի գրունտներում կողալիցքով	մ^3	300,00	0,744	223,34	2,79
3	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով IV կարգի գրունտներում, կողալիցքով	մ^3	28,8	3,865	111,31	1,39
4	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով IV կարգի գրունտներում՝ բարձելով ա/մ տեղափոխելով 5 կմ	մ^3	143,10	3,683	527,01	6,59
5	Ավազի նախաշերտ h=10սմ	մ^3	38,8	4,435	172,09	2,15
6	Ավազի պաշտպանիշ շերտ h=de+15սմ	մ^3	100,6	3,627	364,91	4,56
7	Խրամուղու և փոսորակի ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից տոփանումով	մ^3	643,4	0,285	183,45	2,29
	1.2 Ջրագիծ 1-ի տեխնոլոգիական աշխատանքներ					0,00
1	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (HDPE)Dn110x6,6մմ,Pn=10մթն, փորձարկումով	մ	200,0	3,374	674,78	8,44
2	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (HDPE)Dn90x5,4մմ,Pn=10մթն, փորձարկումով	մ	200,0	2,376	475,20	5,94
3	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (HDPE)Dn63x3,8մմ,Pn=10մթն, փորձարկումով	մ	135,0	1,283	173,21	2,17
4	(HC)Պոլիէթիլեն-մետաղ կցորդիչ (HDPE)Dn110/(St)Dn100	հատ	1	14,264	14,26	0,18
5	Պոլիէթիլենե անցում (HDPE)Dn110x90	հատ	1	5,552	5,55	0,07
6	Պոլիէթիլենե անցում (HDPE)Dn90x63	հատ	1	4,095	4,09	0,05
7	Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ (HDPE)Dn110x63	հատ	3	8,213	24,64	0,31
8	Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ (HDPE)Dn90x63	հատ	3	5,790	17,37	0,22
9	Պոլիէթիլենե եռաբաշխիչ (HDPE)Dn63	հատ	1	4,578	4,58	0,06

	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների լվացում և ախտահանում (HDPE)Dn110x6,6մմ,Pn=10մթն,	մ	200,0	0,079	15,84	0,20
11	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների լվացում և ախտահանում (HDPE)Dn90x5,4մմ,Pn=10մթն, ,	մ	200,0	0,079	15,84	0,20
12	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների լվացում և ախտահանում (HDPE)Dn63x3,8մմ,Pn=10մթն,	մ	135,0	0,079	10,69	0,13
	1.3. Հրշեջ հիդրանտ հորերի ՀՀ-1 և ՀՀ-2 հողային և շինարարական աշխատանքներ					
1	Փոսորակի մշակում էքսկավատորով III կարգի գրունտներում, կողալիցքով	մ³	8,40	0,578	4,86	0,06
2	Փոսորակի մշակում էքսկավատորով IV կարգի գրունտներում կողալիցքով	մ³	8,60	0,744	6,40	0,08
3	Փոսորակի մշակում էքսկավատորով IV կարգի գրունտներում՝ բարձելով ա/մ տեղափոխելով 5 կմ	մ³	4,00	3,683	14,73	0,18
4	Փոսորակի ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից տոփանումով	մ³	17,0	0,285	4,85	0,06
5	B7.5 բետոնի նախապատրաստական շերտի ստեղծում h=10սմ հաստությամբ	մ³	0,52	32,813	17,06	0,21
6	Ցեմենտ/ավազային շաղախ M100 մակնիշի	մ³	0,10	41,509	4,15	0,05
7	D=1,0մ H=1,5մ ե/բ հավաքովի հորի մոնտաժային աշխատանքների իրականացում (հիմքի սալ, պատի օղակ, ծածկի սալ,մետաղ.ելարան,ներդիր տարրեր)	մ³	2,20	40,178	88,39	1,10
8	D=1.0մ տրամագծով ե/բ հորի հիմքի սալ ՀՍ-10 տիպի	հատ	2	24,219	48,44	0,61
9	Հորի ստորին հատվածում լեկալ աղյուսե շարվածքի իրականացում	մ3	0,56	78,432	43,92	0,55
10	Պատի օղակ ՊՕ-10-6	հատ	4	27,847	111,39	1,39
11	Ե/բ հորերի ծածկի սալերի տեղադրում ՕՍ1-10 տիպի թուջե ծանր մտոցով	հատ	2	106,548	213,10	2,66
12	Մետաղական ելարան	տ	0,028	605,389	16,95	0,21
13	Ներդիր տարրեր	կգ	17,4	0,602	10,47	0,13
	1.4. Հրշեջ հիդրանտ հորերի ՀՀ-1 և ՀՀ-2 տեխնոլոգիական աշխատանքներ					
1	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (HDPE)Dn110x6,6մմ,Pn=10մթն, փորձարկումով	մ	4,5	3,374	15.18	0,19
2	Պողպատե էլ. եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (St)Dn57x3մմ փորձարկումով	մ	9,0	3,168	28,51	0,36
3	Հրշեջ հիդրանտների Dn100,H=1.0մ,Pn=10մթն	հատ	2	117,327	234,65	2,93
4	Սեպավոր փականների մոնտաժում Dn100, Pn=16մթն,	հատ	2	69,490	138,98	1,74
5	Պողպատե ազատ կցաշուրթերի մոնտաժում Dn100	հատ	2	9,686	19,37	0,24
6	Պոլիէթիլենե եռաբաշխիչ (HDPE)Dn110	հատ	2	6,399	12,80	0,16
7	Պոլիէթիլենե միջադիր (HDPE)Dn110	հատ	2	8,213	16.43	0,21

	Ճրմունկ-տակդիր Dn100	հատ	2	11,136	22,27	0,28
9	Բետոնե հենարանի կառուցում B7.5 դասի բետոնով	մ3	0,016	32,361	0,52	0,01
10	Ողողատե ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	$մ^2$	1,0	0,689	0,69	0,01
11	Փականների տակդիր Φ100 խողովակից Gմիջ=6,5կգ(3 հատ)	տ	0,0130	660,274	8,58	0,11
	Ընդամենը Ջրագիծ-1				**4282,76**	**53,54**
	Օբյեկտի անվանումը. Ջրագիծ 2					
	2.1 Ջրագիծ 2-ի հողային աշխատանքներ					
1	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով III կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	308,70	0,578	178,48	2,23
2	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով IV կարգի գրունտներում կողալիցքով	$մ^3$	300,00	0,744	223,34	2,79
3	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով IV կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	31,2	3,865	120,59	1,51
4	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով IV կարգի գրունտներում՝ բարձելով ա/մ տեղափոխելով 5 կմ	$մ^3$	131,90	3,683	485,76	6,07
5	Ավազի նախաշերտ h=10սմ	$մ^3$	38,1	4,435	168,98	2,11
6	Ավազի պաշտպանիշ շերտ h=de+15սմ	$մ^3$	91,8	3,627	332,99	4,16
7	Խրամուղու և փոսորակի ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից տոփանումով	$մ^3$	639,9	0,285	182,45	2,28
	2.2 Ջրագիծ 2-ի տեխնոլոգիական աշխատանքներ					
1	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (HDPE)Dn75x4,5մմ,Pn=10մթն, փորձարկումով	մ	400,0	1,711	684,29	8,55
2	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (HDPE)Dn63x3,8մմ,Pn=10մթն, փորձարկումով	մ	125,0	1,283	160,38	2,00
3	Պոլիէթիլենե անցում (HDPE)Dn75x63	հատ	1	3,612	3,61	0,05
4	Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ (HDPE)Dn75x63	հատ	5	6,154	30,77	0,38
5	Պոլիէթիլենե եռաբաշխիչ (HDPE)Dn75	հատ	2	5,790	11,58	0,14
6	Պոլիէթիլենե եռաբաշխիչ (HDPE)Dn63	հատ	1	4,578	4,58	0,06
7	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների լվացում և ախտահանում (HDPE)Dn75x4,5մմ,Pn=10մթն,	մ	400,0	0,079	31,68	0,40
8	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների լվացում և ախտահանում (HDPE)Dn63x3,8մմ,Pn=10մթն,	մ	125,0	0,079	9,90	0,12
	2.3. Հրշեջ հիդրանտ հորերի ՀՀ-3 և ՀՀ-4 հողային և շինարարական աշխատանքներ					
1	Փոսորակի մշակում էքսկավատորով III կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	8,40	0,578	4,86	0,06
2	Փոսորակի մշակում էքսկավատորով IV կարգի գրունտներում կողալիցքով	$մ^3$	8,60	0,744	6,40	0,08

	Փոսորակի մշակում էքսկավատորով IV կարգի գրունտներում՝ բարձելով ա/մ տեղափոխելով 5 կմ	մ³	4,00	3,683	14,73	0,18
4	Փոսորակի ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից տոփանումով	մ³	17,0	0,285	4,85	0,06
5	B7.5 բետոնի նախապատրաստական շերտի ստեղծում h=10սմ հաստությամբ	մ³	0,52	32,805	17,06	0,21
6	Ցեմենտ/ավազային շաղախ M100 մակնիշի	մ³	0,10	41,509	4,15	0,05
7	D=1,0մ H=1,5մ ե/բ հավաքովի հորի մոնտաժային աշխատանքների իրականացում (հիմքի սալ, պատի օղակ, ծածկի սալ,մետաղ.ելարան,ներդիր տարրեր)	մ³	2,20	39,877	87,73	1,10
8	D=1.0մ տրամագծով ե/բ հորի հիմքի սալ ՀՍ-10 տիպի	հատ	2	24,219	48,44	0,61
9	Հորի ստորին հատվածում լեկալ աղյուսե շարվածքի իրականացում	մ3	0,56	78,432	43,92	0,55
10	Պատի օղակ ՊՕ-10-6	հատ	4	27,847	111,39	1,39
11	Ե/բ հորերի ծածկի սալերի տեղադրում ՕՍ1-10 տիպի թուջե ծանր մտոցով	հատ	2	106,548	213,10	2,66
12	Մետաղական ելարան	տ	0,028	605,389	16,95	0,21
13	Ներդիր տարրեր	կգ	17,4	0,602	10,47	0,13
	2.4. Հրշեջ հիդրանտ հորերի ՀՀ-3 և ՀՀ-4 տեխնոլոգիական աշխատանքներ					
1	Պոլիէթիլենե եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (HDPE)Dn110x6,6մմ,Pn=10մթն, փորձարկումով	մ	4,5	3,374	15,18	0,19
2	Պողպատե էլ. եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում (St)Dn57x3մմ փորձարկումով	մ	9,0	3,168	28,51	0,36
3	Հրշեջ հիդրանտների Dn100,H=1.0մ,Pn=10մթն	հատ	2	113,399	226,80	2,84
4	Սեպավոր փականների մոնտաժում Dn100, Pn=16մթն,	հատ	2	69,490	138,98	1,74
5	Պողպատե ազատ կցաշուրթերի մոնտաժում Dn100	հատ	2	9,686	19,37	0,24
6	Պոլիէթիլենե եռաբաշխիչ (HDPE)Dn75	հատ	2	5,790	11,58	0,14
7	Պոլիէթիլենե անցում (HDPE)Dn75/110	հատ	2	7,247	14,49	0,18
8	Պոլիէթիլենե միջադիր (HDPE)Dn110	հատ	2	8,213	16,43	0,21
9	Արմունկ-տակդիր Dn100	հատ	2	11,136	22,27	0,28
10	Բետոնե հենարանի կառուցում B7.5 դասի բետոնով	մ3	0,016	32,361	0,52	0,01
11	Պողպատե ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ²	1,0	0,689	0,69	0,01
12	Փականների տակդիր Φ100 խողովակից $G_{միջ}$=6,5կգ(3 հատ)	տ	0,0130	660,274	8,58	0,11
	Ընդամենը Ջրագիծ-2				3716,824	46,46
	Ընդամենը՝ Ջրագծեր 1 և 2				7999,580	100,00
	ԱԱՀ (20%)				1599,916	

Ընդհանուրը				9599,496	

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
2	հիդրոտեխնիկական

* Կապալառուն աշխատանքները կատարում է ծավալաթերթում նշված հասցեում:

Ըստ Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) հետևյալ ոլորտների՝

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102462281

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ
ք. Եղվարդ, Երևանյան փ. 7/5
ՀՎՀՀ 03554349
«Էվոկա Բանկ» ՓԲԸ
Հ/h 16600053799200

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 20 » սեպտեմբերի 2022թ. կնքված
«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/40-2» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ և ԿԱՄԱՐԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	*Աբովյան համայնքի կարիքների համար Կամարիս բնակավայրի ջրագծերի կառուցման աշխատանքների ձեռքբերում*	*Պայմանագրի կնքման օրվանից*	*Պայմանագիրն/համաձայնագիրն/ ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ*
ԸՆԴԱՄԵՆԸ		*Պայմանագրի կնքման օրվանից*	*Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102462281

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ
ք. Եղվարդ, Երևանյան փ. 7/5
ՀՎՀՀ 03554349
«Էվոկա Բանկ» ՓԲԸ
Հ/h 16600053799200

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 20 » սեպտեմբերի 2022թ. կնքված
«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/40-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45231126	Աբովյան համայնքի կարիքների համար Կամարիս բնակավայրի ջրագծերի կառուցման աշխատանքների ձեռքբերում	.%	...%	..%	..%	.%	...%	...%	...%	4 799 748	9 599 496	9 599 496	9 599 496	9 599 496

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102462281

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ
ք. Եղվարդ, Երևանյան փ. 7/5
ՀՎՀՀ 03554349
«Էվոկա Բանկ» ՓԲԸ
Հ/h 16600053799200

/ստորագրություն/
Կ.Տ